

ՖԻՍԿԱԼ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎՐԱ (ՀՀ ՕՐԻՆԱԿՈՎ)

Արշակ Հարությունի Վարժապետյան

Հոդվածը ստացվել է՝ 12.10.22, ուղարկվել է գրախոսման՝ 17.10.22., երաշխավորվել է տպագրության՝ 26.10.22

Ներածություն: Երկրի տնտեսության զարգացման վրա մեծ ազդեցություն ունի ֆիսկալ քաղաքականության ճիշտ իրականացումը: Չնայած այն հանգամանքին, որ ՀՀ հարկաբյուջետային քաղաքականության ուսումնասիրության աստիճանը բավականին խորքային է, սակայն, մեր կարծիքով, դեռևս առկա է բարեփոխման և կատարելագործման անհրաժեշտություն, հատկապես Covid-19 համավարակից հետո: Համավարակը տնտեսությանը կանգնեցրեց ճգնաժամային իրավիճակի առջև, իսկ նման պայմաններում ֆիսկալ քաղաքականության դերը էլ ավելի է կարևորվում, քանի որ այն պահանջում է առավել ճկուն լուծումներ՝ կախված իրավիճակից, ինչով էլ պայմանավորված է հետազոտության **արդիականությունը**: Հետազոտության **նպատակն** է արդյունավետ ֆիսկալ քաղաքականության իրականացման միջոցով առաջարկել լուծումներ՝ կապված ՀՆԱ-ի ծավալն առավելագույն չափով պոտենցիալ մակարդակին մոտեցնելու կամ ինֆլյացիայի կրճատման հետ: Կապված գնաճի, գործազրկության, տոկոսադրույքի աճի հետ **խնդիր** է դրվել ֆիսկալ քաղաքականության հիմնահարցերը դիտարկել ՀՀ օրինակով:

Գրականության վերլուծություն: Հետազոտության օբյեկտ է հանդիսանում ՀՀ ՀՆԱ-ն, բյուջեի եկամուտները, ծախսերը, հարկերի մակարդակից առաջացած հարկային բեռը, բյուջեի մուտքերի հարկերով սնուցման բաժինը, միավոր հարկի փոփոխության ազդեցությունը բյուջեի եկամուտների վրա, առկա հարկաբյուջետային համակարգում պետական բյուջեի պակասուրդի, պետական պարտքի և գործազրկության դինամիկան և դրա վիճակի միջինը: Նպատակի իրագործման համար դիտարկել ենք մի շարք գիտնականների կողմից հարկաբյուջետային քաղաքականության վերաբերյալ հետազոտությունները: Մասնավորապես հետևյալ թեմաներով՝ Ա. Մաթևոսյանը «Հարկաբյուջետային քաղաքականությունը և ՀՀ կառուցվածքային բյուջեի գնահատականը»¹: Գ. Կիրակոսյանի «Տնտեսագիտության տեսություն»² Վ. Հարությունյանի «Հարկային քաղաքականությունը և նրա կատարելագործման հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում»³, Վ.Բոստանջյանը և Գ. Կիրակոսյանը «Բյուջետային

¹ Ա. Մաթևոսյան և ուրիշներ, «Հարկաբյուջետային քաղաքականությունը և ՀՀ կառուցվածքային բյուջեի գնահատականը», Եր. Տնտեսագետ 2014թ., 56 էջ:
https://asue.am/upload/files/amberd-economic-policy/Matevosyan_done.pdf

² Գ. Կիրակոսյան և ուրիշներ, «Տնտեսագիտության տեսություն», Երևան 2009թ., 752 էջ:
https://library.anau.am/images/stories/grqer/Tntesagitakan/tnt_tesutyun.pdf

³ Վ. Լ. Հարությունյան, «Հարկային քաղաքականությունը և նրա կատարելագործման հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում», Երևան «Զանգակ-97», 2007թ., 192 էջ:

քաղաքականության հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները Հայաստանի Հանրապետությունում»¹, և այլն: Համանման կերպ է դիտարկվում բոլոր ժամանակներում առկա հարկաբյուջետային քաղաքականությանը բխող հետազոտությունները, որոնց այս մասում հատ առ հատ չենք անդրադառնում: Մեր կողմից դիտարկվել են մի քանի արդի հիմնահարցեր, որոնք ըստ մեզ դեռևս փոփոխության չեն ենթարկել հարկային վարչարարությունը կամ հարկաբյուջետային համակարգը:

Մեթոդաբանություն: Հետազոտության համար տեսական, տեղեկատվական և *մեթոդաբանական* հիմք են հանդիսացել ՀՀ ՊԵԿ հաշվետվությունները, ՀՀ գործող օրենսդրական ակտերն ու նորմերն, ինտերնետային կայքերը, միջազգային կառույցների կողմից հրապարակված ֆիսկալ քաղաքականության սահմանումները, Քեյնսյան տեսությունը, հայրենական ու արտասահմանյան մասնագիտական գրականությունն ու հոդվածները, վիճակագրական-տեղեկատվական բազաներն և այլն: Հետազոտության ընթացքում օգտագործվել են վիճակագրական ու տրամաբանական, աղյուսակային, հաշվարկային, համեմատական, համակարգչային ու էկոնոմետրիկ վերլուծություններ և այլ մեթոդներ: Բացի հարկաբյուջետային համակարգի առկա վիճակի ուսումնասիրությունից, ուսումնասիրվել է ՀՀ-ում հարկազանձման համակարգը, դիտարկվել են ոլորտներ, որտեղ հարկերի որոշ տեսակներում առկա է ակնհայտ արտոնություններ և հարկային վարչարարության տեսանկյունից առկա չէ գիտական ոլորտի համար հարկային ուղենիշներ և այլն, որոնց մասով մեր կողմից նկատված թերությունների վերացման ուղղությամբ արվել են կիրառական առաջարկություններ:

Վերլուծություն: Հարկաբյուջետային քաղաքականությունն, ինչպես որ դրամավարկային քաղաքականությունը, ըստ Քեյնսյան տնտեսագետների վերջիններս լավագույն տնտեսագիտական «մեխերն» են տնտեսությունը կառավարելու և գործազրկության դեմ պայքարելու կամ մակարդակը կրճատելու համար: Չնայած, որ զուգահեռաբար կիրառվում են արժույթային և մակրոպրոդուկցիայի քաղաքականությունները նույնպես: Հայաստանում բացի հարկաբյուջետային քաղաքականությունից մնացած քաղաքականությունների կարգավորողը ՀՀ կենտրոնական բանկն է: Հարկաբյուջետային քաղաքականությունն իրականացվում է հարկերի և ծախսումների փոփոխության միջոցով, իսկ դրամավարկային քաղաքականությունն իրականացվում է փողի առաջարկի և տոկոսադրույքի միջոցով, որով ՀՀ ԿԲ-ն սահմանում է հիմնական տոկոսադրույքը՝ վերաֆինանսավորման տոկոսադրույքը, և ազդում փողի առաջարկի վրա: Եվ դրամավարկային, և՛ հարկաբյուջետային քաղաքականություններն էլ կարող են կիրառվել կարճաժամկետ հատվածում տնտեսական ցուցիչների վրա ազդելու համար:

Մենք գիտենք, որ ֆինանսները դրսևորվում են բաշխման, վերահսկողության, խթանման և ֆիսկալային կամ հարկաբյուջետային էությամբ: Մեր

¹ Վ. Բոստանջանը և Գ. Կիրակոսյանը «Բյուջետային քաղաքականության հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները հայաստանի հանրապետությունում», Բանբեր 2021թ., 9 էջ, http://ysu.am/files/07V_Bostanjyan_G_Kirakosyan.pdf

կողմից ուսումնասիրության օբյեկտը ֆինկալայինը կամ հարկաբյուջետայինն է: Հարկաբյուջետայինի էությունը, դա այն ոլորտներն ու այն ուղղություններն են, որոնք չունեն ինքնուրույն ֆինանսավորման աղբյուրներ կամ եղածը բավարար չէ նպատակի կամ պահանջի իրագործման համար, որոնք հարկերի միջոցով հավաքագրվում են ձեռնարկություններից և ֆիզիկական անձանցից պետական ապարատի, երկրի պաշտպանության կամ ոչ արտադրական ոլորտների պահպանման համար(կրթություն, մշակույթ և այլն):

ՀՀ-ում առկա է հարկաբյուջետային քաղաքականության 3 տեսակ, մասնավորապես չեզոք, խթանող կամ էքսպանսիվ և զսպող, արգելակող կամ ռեստորիկտիվ:

Հարկային դրույքաչափերի կիրառման առումով առանձնացվում է ռեգրեսիվ և պրոգրեսիվ հարկազանձման մոտեցումներ: Ռեգրեսիվ մոտեցումը եկամտի աճին զուգընթաց հարկի տոկոսադրույթի իջեցումն է, իսկ պրոգրեսիվը՝ հակառակը, իսկ համամասնական հարկը, երբ հարկային դրույքաչափը մնում է անփոփոխ: Համամասնական է ՀՀ-ում օրինակ ավելացված արժեքի հարկը, եկամտային հարկը և այլն: Չնայած այն հանգամանքին, որ 4 տարվա կտրվածքով եկամտային հարկի մասով առկա է հաշվարկային տոկոսադրույթի փոփոխում, բայց միևնույն է այն անկախ հարկման բազայի չափից միևնույն տոկոսադրույթն է կիրառվում՝ անկախ բազայից կայուն է:

Մենք հաշվարկել ենք հարկերով բեռնվածության մակարդակը և հաշվարկման համար դիտարկել ենք ՀՆԱ-ում հարկերի բաժինը հաշվարկային բաձնաձևով: Մասնավորապես՝

$$\text{Հարկային բեռ} = \frac{\sum \text{Հարկեր}}{\text{ՀՆԱ}}$$

Աղյուսակ 1

Հարկերով բեռնվածության մակարդակի հաշվարկն ըստ Հարկեր/ՀՆԱ հարաբերակցության

մլն. ՀՀ դրամ

Տարի	ՀՆԱ	Հարկեր ¹	Հարկային Բեռ
2021	6,982,848.60	1,586,900.00	22.73%
2020	6,181,664.10	1,385,200.00	22.41%
2019	6,543,321.80	1,464,300.00	22.38%
2018	6,017,035.20	1,258,100.00	20.91%
2017	5,564,493.30	1,158,100.00	20.81%
2016	5,067,293.50	1,079,700.00	21.31%
2015	5,043,633.20	1,067,900.00	21.17%
2014	4,828,626.30	1,064,100.00	22.04%
2013	4,555,638.20	1,000,900.00	21.97%
2012	4,266,460.50	749,300.00	17.56%

¹ Վերջին մուտք 03.03.2022թ. , ՊԵԿ պաշտոնական կայք էջ, Հրապարակումներ, Հարկային տեղեկատվություն, ՀՀ ՊԵԿ հաշվետվություններ,

<https://www.petekamutner.am/siPublications.aspx?itn=ts&ptname=AnnualReports>

Տարի	ՀՆԱ	Հարկեր ¹	Հարկային Բեռ
2011	3,777,945.60	654,000.00	17.31%
2010	3,460,202.70	594,100.00	17.17%
2009	3,141,651.00	522,400.00	16.63%
2008	3,568,227.60	621,100.00	17.41%
2007	3,149,283.40	505,500.00	16.05%

Աղյուսակային հաշվարկներից երևում է, որ վերջին 15 տարում ՀՆԱ-ն գրեթե 20 տոկոս կախվածության մեջ է հարկերից՝ պետական բյուջեի մուտքերի գրեթե ամբողջական մասը (տես Աղյուսակ 2):

Աղյուսակ 2

Հարկերի մասնաբաժինը բյուջետային մուտքերում¹

մլն. ՀՀ դրամ

Տարի	Բյուջեի եկամուտներ	Հարկեր	Հարկի մասնաբաժինը եկամտում
2021	1,684,113.80	1,586,900.00	94.23%
2020	1,560,655.30	1,385,200.00	88.76%
2019	1,565,488.90	1,464,300.00	93.54%
2018	1,341,690.60	1,258,100.00	93.77%
2017	1,237,780.80	1,158,100.00	93.56%
2016	1,171,107.30	1,079,700.00	92.19%
2015	1,167,744.00	1,067,900.00	91.45%
2014	1,144,762.70	1,064,100.00	92.95%
2013	1,071,370.60	1,000,900.00	93.42%
2012	946,193.40	749,300.00	79.19%
2011	880,851.00	654,000.00	74.25%
2010	780,439.40	594,100.00	76.12%
2009	689,995.10	522,400.00	75.71%
2008	785,355.00	621,100.00	79.09%
2007	588,040.40	505,500.00	85.96%

«Աղյուսակ 2»-ի հաշվարկային ցուցանիշներից ակնհայտ է, որ պետական բյուջեի մուտքերը մեծ կախվածության մեջ են հարկերից, իսկ այս պարագայում զսպող կամ ռեստրիկտիվ հարկային քաղաքականության տեսակից այլ տեսակի մասին խոսելը վերջին գոնե 10 տարվա ընթացքում ավելորդ է պարզապես: Նշվածը ցուցադրել ենք նաև էկոնոմետրիկ հաշվարկով առավել հստակ մոդելավորելու համար (տես Հավելված 1):

¹ <https://www.petekamutner.am/siPublications.aspx?itn=ts&ptname=AnnualReports>

Բյուջեի եկամուտների և հարկերի ռեգրեսիոն վերլուծությունն ըստ տարիների

<i>Regression Statistics</i>			
Multiple R	0.99		
R Square	0.98		
Adjusted R Square	0.98		
Standard Error	48,010.36		
Observations	15		
ANOVA			
	<i>df</i>	<i>F</i>	<i>Sign.F</i>
Regression	1	664.68	0.00
Residual	13		
Total	14		
	<i>Coefficients</i>	<i>Standard Error</i>	<i>t Stat</i>
Intercept	196,011.54	37,472.19	5.23
X	0.93	0.04	25.78
	<i>P-value</i>	<i>Lower 95%</i>	<i>Upper 95%</i>
Intercept	0.0002	115,057.79	276,965.29
X	0.0000	0.85	1.01

Մեր կառուցած աղյուսակում բյուջեի եկամուտները կախյալներն են(Y), իսկ հարկերը՝ անկախները(X): Այսինքն, ուսումնասիրությունն իրականացվել է հասկանալու համար, թե մեկ միլիոն ՀՀ դրամ հարկերի փոփոխությունը (նվազումը կամ աճը) ինչպես է անդրադառնալու բյուջեի եկամուտների վրա, որը հասկանալու համար պետք է դիտարկենք ANOVA¹ թեստը: Հաշվի առնելով, որ ճշտված դետերմինացիայի գործակցը (Adjusted R-ից Square/ADJ-R²) գտնվում է 0,7-0,9 միջակայքում, իսկ դա նշանակում է, որ կապը շատ ուժեղ է այդ երկու գործոնների, իսկ գրոյական հիպոթեզը մերժելու կամ հաստատելու համար պետք է դիտարկենք մեր ցուցանիշների արդյունքում P-value-ն, որը պետք է փոքր լինի 0,05 գործակցից, որը որ մեր ցուցանիշներում փոքր է, կարող ենք հստակ մեկնաբանել, որ 95% հավանականությամբ մեկ միլիոն հարկերի փոփոխությունը(աճը կամ նվազումը) անդրադառնալու է բյուջեի եկամուտների վրա 0,85 մլն.ՀՀ դրամից մինչև 1,01 մլն. ՀՀ դրամով (մեր հաշվարկի սխալի չափը 48,010,36 ՀՀ դրամ է, որը 2021թ. ցուցանիշի հետ համեմատած աննշան

¹ Analysis of variance կամ ANOVA(Շեղման վերլուծություն) – վիճակագրության մեջ օգտագործվող վերլուծության գործիք, որը ընդհանուր փոփոխականությունը տարանջատում է երկու մասի՝ համակարգված և պատահական: Համակարգվածները վիճակագրորեն ազդեցություն են ունենում ուսումնասիրության օբյեկտի վրա, իսկ պատահականները՝ ոչ: ANOVA թեստը ցույց է տալիս, թե անկախ փոփոխականներն ինչ ազդեցություն են ունենում կախյալ փոփոխականների վրա ռեգրեսիոն ուսումնասիրության ժամանակ:

մեծություն է, ինչ համար այն դիտարկման ժամանակ անտեսվել է): Մա նշանակում է, որ տնտեսական շուկերի դեպքում բյուջեի մուտքերը կամ բյուջետային եկամուտները մեծ հարվածի տակ են լինելու, ինչը պետք է զսպել այլ ֆինանսական գործիքների միջոցով, օրինակ՝ պետական պարտատոմսերի տեղաբաշխման միջոցով բյուջետային եկամուտների ապահովման համար:

Ըստ Քեյնսյան տեսության հարկաբյուջետային քաղաքականությունը գործազրկության դեմ պայքարելու կամ մակարդակը կրճատելու «Մեխ» է, ինչի համար դիտարկել ենք ՀՆԱ-ի աճնի համեմատ ՀՀ-ում գործազրկության մակարդակի կրճատումը: Դինամիկան ուսումնասիրելու համար կազմել ենք Աղյուսակ 3-ը, ՀՀ Վիճակագրական կոմիտեի կողմից հրապարակված տվյալների հիման վրա, որում, եթե միջինացված դիտարկում ենք ցուցանիշների տվյալ տարվա դինամիկան նախորդ տարիների համեմատ, ապա կարող ենք ասել բյուջեի պակասուրդը և պետական պարտքի ցուցանիշներն աճում են զուգահեռաբար գրեթե միևնույն գործակցային մեծությամբ, իսկ գործազրկությունը գրեթե միջին տարեկան շեղմամբ փոփոխության չի ենթարկվում: Այս ամենի համատեքստում, մենք կարող ենք ասել, որ պետական նոր պարտքը սպասարկում է առկա պետական պարտքերի սպասարկմանն ու պակասուրդների հավելմանը:

Աղյուսակ 3

Պետական բյուջեի տարեկան պակասուրդի, տարեկան պետական պարտքի և գործազրկության տարեկան դինամիկաներն ու վերջիններս միջինացված փոփոխությունները¹

մլդ. ՀՀ դրամ

Տարի ²	Պետական բյուջե			Պետ. պարտք ³	ԳԾԶ / հազ մարդ/	Փոփոխություն/հարաբ./		
	Եկամուտ	Ծախս	Պակասուրդ			Պակասուրդ	Պետ. պարտք	ԳԾԶ
2020	1,560.7	1,894.6	(334.0)	2,449.8	234.4	80.9%	4.5%	-2.7%
2019	1,565.5	1,629.4	(63.9)	2,338.7	240.8	-64.8%	4.3%	-1.9%
2018	1,341.7	1,447.1	(105.4)	2,238.2	245.4	-153.4%	0.4%	10.8%
2017	1,237.8	1,504.8	(267.0)	2,229.3	219.0	-4.1%	12.9%	-0.5%
2016	1,171.1	1,449.1	(278.0)	1,942.0	220.2	13.2%	10.0%	-10.7%
2015	1,167.7	1,409.0	(241.3)	1,748.7	243.7	62.6%	12.3%	0.7%
2014	1,144.8	1,235.1	(90.3)	1,533.0	242.1	20.8%	-2.8%	7.2%
2013	1,071.4	1,142.9	(71.5)	1,576.4	224.6	16.2%	4.1%	-9.3%
2012	946.2	1,006.1	(59.9)	1,511.7	245.5	-76.4%	4.5%	-8.2%

¹ Վերջին մուտք 10.10.2022թ., ՀՀ Վիճակագրական կոմիտեի տվյալների շտեմարան, Վիճակագրական ցուցանիշներ, <https://armstat.am/am/?nid=12&id=08017&submit=%D5%93%D5%B6%D5%BF%D6%80%D5%A5%D5%AC>

² Տվյալներում ընդգրկված չէ 2021թ.-ն, քանի որ գործազուրկներ ցուցանիշները դեռևս ճշգրտման փուլում են:

³ Վերջին մուտք 10.10.2022թ., ՀՀ ԿԲ պաշտոնական կայքէջ, Փոխարժեքի արխիվ՝
1 USD=404.30 ՀՀ դրամ

2011	880.9	986.5	(105.7)	1,443.1	265.7	-64.6%	7.5%	-4.7%
2010	780.4	954.3	(173.9)	1,334.4	278.2	-37.5%	10.1%	4.4%
2009	690.0	929.1	(239.1)	1,199.5	265.9	89.5%	46.8%	12.9%
2008	785.4	810.6	(25.2)	637.7	231.6			
Միջին ցուցանիշներ						-9.8%	9.6%	-0.2%

Բացի վերը նշված հանգամանքներից, նշված համատեքստում մեր կողմից դիտարկվել է ՀՀ օրինակով նաև մի քանի դեպքեր և/կամ փոփոխություններ պարտադիր վճարների և հարկերի հավաքագրման գործում: ՀՀ-ում տիրող հարկազանձման իրավիճակով պայմանավորված վերջին 5-10 տարիների ընթացքում հարկաբյուջետային քաղաքականության զսպող տեսակից բացի այլ տեսակի մասին խոսելը առաջին իսկ հայացքից էլ անհիմն է, քանի որ բոլոր դեպքերում էլ հարկային բեռը միշտ չի, որ ի օգուտ հարկատուի է գործում, չնայած, որ առկա են տեղային առաջին իսկ հայացքից թվացող հարկի սահմանաչափի բարելավումներ, որը սակայն մեկ այլ հարկատեսակի բարձրացմամբ լրացվում է: Դիտարկենք հետևյալ հանգամանքը. 2016թ. նոյեմբերի 1-ին ընդունվեց ՀՀ հարկային օրենսգիրքը(ՀՕ), որը ուժի մեջ մտավ արդեն 2018թ.-ի հունվարի 1-ից: Նույն օրենսգրքում մեծ փաթեթով լրացումներ իրականացվեց 01.01.2020թ. ՀՕ-68-Ն օրենսգրքում փոփոխություններ կատարելու օրենքը: Մեջբերումներ. Օրենսգրքի ուժի մեջ մտնելուց մինչև 2020թ. հունվար 2019թ.-ին իրականացված խոշոր հարկային բեռի իրականացում փոքր և միջին տնտեսվարողների համար, ըստ որի հաստատագրված վճարներով աշխատողները, օրինակ՝ ավտոտեխսպասարկման կայանների, ավտոկանգառների վճարը փոխարինվեց շրջանառության հարկով, ինչի արդյունքում հարկային բեռը մեծացավ, բացի այդ 2020թ. նույն օրենքով ուժ մեջ մտավ միկրոձեռնարկատիրական գործունեությունը, որը կարելի է ասել փոխարինման եկավ ընտանեկան ձեռնարկատիրական գործունեությանը առաջին հայացքից սահուն փոփոխությունով, սակայն այն իր ընդգրկուն տեսակներով չամփոփեց այն բոլոր տեսակները, որոնք դրանից առաջ հայտագրված էին որպես ընտանեկան ձեռնարկատիրական գործունեություն, քանի որ վերջինիս ընդգրկման շրջանակը բավականին նեղ է: Այս պարագայում նույնպես հարկային բեռը տնտեսվարողների համար մեծացավ: Բացի այդ, համաձայն 25 հունիսի 2020թ. ՀՕ-332-Ն ՀՀ Հարկային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին ՀՀ օրենքի 2021թ. հունվարի 1-ին գույքի կադաստրային արժեքի փոխարեն հարկման բազա է ընտրվեց գույքի մոտավոր շուկայական արժեքը, ինչը մի քանի անգամ ավելացրեց գույքահարկի վճարվելիք հարկային բեռը թե՛ ֆիզիկական անձանց, և թե՛ տնտեսվարողների համար:

Մեկ այլ փոփոխություն ևս. թվում է թե սկսած 2021թ.-ից մինչև 2023թ. եկամտային հարկը յուրաքանչյուր տարի 1% տոկոսային կետով բարելավվում է, ինչը բերելու է միննույն եկամտի բազայի նկատմամբ հարկային բեռի նվազման, սակայն դրա փոխարեն ավելացել է այլ տեսակի հարկային և պարտադիր վճարների բեռը՝ կենսաթոշակային ֆոնդի, դրոշմանիշային ֆոնդի և այլն: Ֆիզիկական անձի դեպքում աշխատակցի աշխատավարձի անփոփոխ լինելու համար պետք

է գործատուն բարձրացնի վերջինիս չհարկված աշխատավարձի չափը կամ ֆիզիկական անձի աշխատավարձից է նվազելու այդ գումարն, իսկ անհատ ձեռնարկատիրոջ կողմից վարվող ձեռնարկատիրական գործունեության դեպքում իր համախառն եկամտի վրա է անմիջապես ազդում:

Դիտարկենք կարևորագույն մեկ այլ փոփոխություն. Համաձայն Հարկային օրենսգրքի 125-րդ հոդվածի 1-ին ենթակետի համաձայն 25.06.19 ՀՕ-68-Ն օրենքի 31-րդ հոդվածի 1-ին կետի փոփոխությամբ ուժի մեջ կմտնի 01.01.2020թ.-ին, ըստ որի շահութահարկի 20% դրույքաչափը փոփոխվում սահմանվեց 18% դրույքաչափով, ըստ որի բոլոր շահութահարկով աշխատող տնտեսվարողների հարկային բեռը 2020թ. հունվարի 2%-ով բարելավեց, սակայն որևէ փոփոխություն տեղի չի ունեցել հարկային բեռի տեսանկյունից շրջանառության հարկ վճարողների համար, որոնք իրենցից ներկայացնում են փոքր և միջին ձեռնարկությունները, ինչպես նաև այն միկրո ձեռնարկություններն, որոնք հաստատագրված հարկից անցում չեն կատարել միկրոձեռնարկատիրական գործունեության և հայտարարագրվել են որպես շրջանառության հարկ վճարողներ: Այսինքն, փոքր ու միջին տնտեսվարողների մոտ հարկային բեռում դեպի բարելավման փոփոխություն որևէ կերպ չկատարվեց:

Այսպիսով, զուգահեռներ անցկացնելով այս բոլոր փոփոխությունների միջև, որոնք տեղի են ունեցել հատկապես 2020թ.-ին և/կամ ուժի մեջ են սկսել մտնել 2020թ.-ից, պարզ է դառնում, որ բարելավել է շահութահարկ վճարողների հարկային բեռը, իսկ տնտեսական առումով երկրի մակրոտնտեսական միջավայրի կայունություն հարկաբյուջետային քաղաքականության առումով հաշվեկշռվել է ֆիզիկական անձանց կողմից վճարվող հարկատեսակներով, որը որ չի ենթադրում տնտեսապես աղքատության կրճատման և բնակչության կենսամակարդակի բարելավման մասին: Այս մոտեցման դեպքում, շահութահարկ վճարողների մոտ 2%-ային կետով բարելավվում է հարկումից հետո շահույթը, որը որոշ դեպքերում բաշխվում է սեփականատերերին որպես դիվիդենտ և հարկվում: Արդյունքում 2%-ային կետով բարելավված տնտեսվարողների հարկային բեռը փոխարինվում է բոլոր հավասար պայմաններում դիվիդենտի վճարման դիմաց 5 տոկոսային կետ հարկով: Տվյալ պարագայում ստացված բոլոր հավասար պայմաններում կարող ենք դիտարկել որպես 3%-ային կետով հարկի դիվերսիֆիկացում օգուտ պետական բյուջե: Մեկ այլ ուշագրավ փաստ է այն, որ Հարկային օրենսգրքի 62-րդ հոդվածի 19-րդ կետի մասով ֆինանսական (հատկապես բանկային համակարգի) մի շարք գործարքների գծով օրենսգրքով տրամադրված է ԱԱՀ գրոյական դրույքաչափ կամ չկիրառում, որոնք զգալի մեծ ազդեցություն կարող են ունենալ հարկաբյուջետային քաղաքականության վրա: Մեր կարծիքով որպես հարկաբյուջետային քաղաքականության բարելավում պետք է ԱԱՀ որոշակի դրույքաչափ սահմանվի վերջիններիս համար:

Վերը նշված բոլոր դեպքերն ու փոփոխությունները այս կամ այն կերպ դրական կամ բացասական են անդրադարձել տնտեսվարողների վրա, սակայն մի ահռելի փաթեթային փոփոխություն է սպասվում 2022-2025թթ.-ի համար, որն ըստ ՀՀ Վարչապետի N919-Լ որոշումը «2022-2025 թվականների հարկային

եկամուտների կառավարման ծրագիրը հաստատելու մասին», որը հարկային ռեժիմի առավել խստացման ծրագրի է: Ի՞նչ է դա ենթադրում: Դա ենթադրում է, որ ծրագրում նշված ժամանակահատվածում նախատեսվում է գյուղատնտեսական արտադրանքների համար նախատեսել 10% ԱԱՀ դրույքաչափի սահմանում 3% հաշվանցման հնարավորությամբ, որը բոլոր հավասար պայմաններում ենթադրում է, որ նվազագույնը 7% ԱԱՀ հարկային բեռով է ծանրաբեռնվելու գյուղատնտեսական արտադրանքի իրացումով զբաղվողների մոտ, քանի որ հիմնավորման մեջ նշվում է, որ շատ չեն դեպքերը, որ տնտեսվարողները գերազանցում են տարեկան 115 մլն. ՀՀ դրամ շեմը և անցում են կատարում ԱԱՀ հարկային ռեժիմի: Ֆինանսական ծառայություններ մատուցող կազմակերպությունները, որոնց անդրադարձել էինք վերը քննարկված մասում, որևէ կերպ չի հիշատակվում խստացում, այլ միայն մանրամասն ուսումնասիրություն, որը հարկազանձման ռեժիմում որևէ ֆինանսական մուտքեր պետական բյուջե չի ապահովելու: Մինչ այժմ միկրոձեռնարկություններում աշխատող աշխատակիցների համար վճարվում է ամսական 5 հազար ՀՀ դրամ հարկ, անկախ աշխատավարձի և դրան հավասարեցված եկամուտների մեծությունից, որը փոխարինվելու է եկամտային հարկի սովորական ռեժիմով, իսկ հաշվարկային փաստաթղթերի տրամադրելու և դրա հիմքով շահութահարկ վճարողների հարկային բազայից նվազեցումները կսահմանափակվեն, որը ենթադրում է, որ շահութահարկ վճարողների բիզնես միջավայրում առաջանում է սահմանափակումներ, քանի որ շահութահարկ վճարողները շահագրգռված չեն լինի իրականացնել համագործակցություն վերջիններիս հետ, ինչ արդյունքում կա՛մ միկրոձեռնարկությունները կսահմանափակվեն առավել էժան ապրանքների և/կամ ծառայությունների մատակարարմամբ, կա՛մ անցում կկատարեն ԱԱՀ հարկային ռեժիմ, այսինքն՝ ավելի խստացված ռեժիմ:

Հարկային ռեժիմի կոպիտ խստացում է սպասվում շրջանառության հարկի հարկատեսակով աշխատող ձեռնարկությունների համար, քանի որ նպատակ է դրվում այդ նույն ծրագրով չեղարկել շրջանառության հարկատեսակը, որի արդյունքում 43 հազար տնտեսվարող սուբյեկտներ միանգամից անցում են կատարելու ԱԱՀ և շահութահարկ հարկային ռեժիմ: Սա նշանակում է, որ եթե խոսում ենք թվերով, ապա 5% հարկը փոխարինվում է 20% ԱԱՀ և 18% շահութահարկերով, այսինքն՝ տնտեսվարողների մոտ հարկային բեռը ավելանում է 33%-ով՝ 20%+18%-5%: Այս եզրահանգմանն ենք գալիս այն բանի արդյունքում, որ 43 հազար տնտեսվարողների կողմից մատուցված ծառայությունների դիմաց ոչ բոլոր, գրեթե ամբողջ մաս կազմող գործընկերները չեն համաձայնվի պայմանագրային հարաբերություններում որպես վրադիր գումար ավելացնել 20% ԱԱՀ-ն, իսկ ավելացնելու դեպքում էլ, բոլոր հավասար պայմաններում հաշվի առնելով, որ շրջանառության հարկով հարկվողների մոտ մեծածավալ չեն լինում հարկային բազայից նվազեցվող ծախսերը, ապա լավագույն սցենարով նվազագույնը 5% հարկային բեռին ավելանալու է ևս 13% հարկային բեռ, եթե գործընկեր կողմը հանձն է առնում 20% ԱԱՀ-ն վճարել, որը որ անիրատեսական սցենար է:

Գիտական նորույթ: Բյուջեի մուտքերի ապահովման գործում հիմնավորվել է առավել որոշիչ մասնաբաժին ունեցող պետական պարտատոմսերի պլանավորումը, իրացումը և տեղաբաշխումը: Առաջարկվել է բորսային կարգավորման մեխանիզմ՝ հիմքում դնելով ֆինանսական միջոցների ներգրավումը պետական պարտատոմսերի ձեռք բերմամբ, տեղաբաշխմամբ, իսկ հարկ եղած դեպքում ԱԱՀ դրույքաչափի կիրառմամբ: Բարենպաստ գիտական միջավայրի ստեղծման նպատակով առաջարկվել է սահմանել եկամտային հարկի գեղչեր՝ հիմք ընդունելով գիտական աստիճանը:

Եզրակացություն: Ուսումնասիրության արդյունքում եկել ենք այն եզրահանգմանը, որ Հայաստանում հարկաբյուջետային քաղաքականության տեսակներից ներկայում գործում է զսպող կամ ռեստրիկտիվ տեսակը, քանի որ 13 տարվա միջին թվաբանական հաշվարկի արդյունքում փաստվեց, որ հարկային բեռը չի նվազում, իսկ դրան զուգահեռ նույն ժամանակահատվածում միևնույն մեթոդաբանության դիտարկմամբ երևում է, որ ավելանում է պետական պարտքը, իսկ գործազրկության մակարդակում գրեթե դրական դինամիկա առկա չէ: Հարկային բեռի հաշվարկները ցույց տվեցին, որ 15 տարվա կտրվածքով ՀՆԱ-ում հարկերի մասնաբաժինը վերջին 9-ը տարում 20 տոկոսային կետից չի նվազում, իսկ «Աղյուսակ 2»-ից պարզ դարձավ, որ բյուջեի եկամուտների 90-95 տոկոսը ապահովվում է հարկերի և պարտադիր վճարների տեսքով, մինչդեռ արդի հարկաբյուջետային քաղաքականությունում կիրառելի է նաև ֆինանսական կամ պարտքային գործիքներով պետական բյուջեի եկամուտների ապահովում, օրինակ՝ պետական պարտատոմսերի թողարկմամբ: Բացի այդ մեր կողմից ուսումնասիրվեց նաև հարկերի և բյուջեի եկամուտների միջև առկա կապի էկոնոմետրիկ վերլուծություն, ըստ որի հարկերից բյուջեի կախվածությունն ուժեղ է, ինչը ենթադրում է, որ տնտեսական մեծ շոկերի դեպքում, ինչպիսին է Covid19-ի Lock Down-ը, բյուջեի եկամուտների ապահովման վրա բացասական մեծ ազդեցություն կունենա, որը կհանգեցնի տնտեսական շոկի:

Ուսումնասիրության արդյունքում կարևոր ենք համարում պլանավորել, իրականացնել և տեղաբաշխել պետական պարտատոմսեր, որոնք կունենան որոշիչ մասնաբաժին բյուջեի մուտքերի ապահովման գործում: Իրականացնել բորսայի կարգավորման այնպիսի մեխանիզմ, ինչպիսին է բանկերի ֆինանսական միջոցների ներգրավման համար ֆինանսական շուկայում իրականացվող գործարքների որոշ մասը պարտադիր իրականացնել պետական պարտատոմսերի ձեռքբերմամբ և տեղաբաշխմամբ, հակառակ դեպքում կիրառել ԱԱՀ դրույքաչափ: Մեծ գիտատեխնիկական առաջընթացի համար կարևոր է ոչ միայն գիտության ոլորտի ֆինանսավորումն, այլ նաև հետազոտողների և գիտնականների համար բարենպաստ միջավայրի ստեղծումը: Մասնավորապես՝ կախված գիտական աստիճանից սահմանել եկամտային հարկի գեղչեր 3 կամ 5 տարվա կտրվածքով՝ պրոֆեսորի 5%, դոկտոր 3%, գիտությունների թեկնածու 2%: Իրականացնել բորսայի կարգավորման այնպիսի մեխանիզմներ, ինչպիսիք կլինեն բանկերի ֆինանսական միջոցների ներգրավման համար ֆինանսական շուկայում իրականացվող գործարքների որոշ մասը պարտադիր պարտատոմսերի

ձեռքբերմամբ և տեղաբաշխմամբ իրականացնել, հակառակ դեպքում կիրառել ԱԱՀ դրույքաչափ բանկերի կողմից չիրականացված գործարքների ծավալին համամասնորեն, այսինքն՝ սահմանվածից քիչ կամ ավել իրականացնելու դեպքում պակաս կամ ավել իրականացված մասի համար հաշվեգրել ԱԱՀ այլ ոչ ԱԱՀ-ով ծառայությունների համար, հաշվի առնելով, որ պետական պարտատոմսերի դիմաց վաստակած տոկոսադրույքների համար առկա չէ հարկում, որով առավել գրավիչ և եկամտաբեր պայմաններ են ստեղծվում ավանդադրման փոխարեն պարտատոմսերի ձեռքբերման համար:

Այս ամենի համատեքստում դիտարկեցինք նաև հարկերի տոկոսադրույքների դիվերսիֆիկացումը, որը ըստ ուսումնասիրության ցույց է տալիս, որ դրույքաչափերի և հարկատեսակների առումով փոքր և միջին ձեռներեցության համար առկա է խստացված կամ անբարենպաստ պայմաններ, իսկ եկամտային հարկի տեսակետից՝ հարկի դիվերսիֆիկացում այլ պարտադիր վճարերի աճով, որի պարագայում անձի մոտ առկա է լինում եկամտի նվազում կամ գործատուի կողմից աշխատավայրի գույտ հիմքով հատուցման պահպանման դեպքում տնտեսվարողի մոտ աշխատավարձային ֆոնդի աճ: Մեկ այլ խստացման ռեժիմ է նախատեսում նոր 2020-2025թ. ծրագիրը, որը չեղարկելու է շրջանառության հարկը, տնտեսվարողների մոտ ստեղծելու է տնտեսական շոկեր, ընդհուպ գների անուղղակի թանկացում և տնտեսվարող սուբյեկտների գործունեության դադարեցում:

Նշվածի կարգավորման առումով, մենք գտնում ենք, որ տնտեսության համար օր առաջ կարևոր է բորսայական գործիքներով տնտեսության խթանումը, որը ինչպես կներքաշի հավելյալ դրամական միջոցներ պետական բյուջե, այլ նաև առկա խնայողությունների շրջանառում ներդրումների տեսքով:

Օգտագործված գրականության ցանկ

1. Վ. Լ. Հարությունյան, «Հարկային քաղաքականությունը և նրա կատարելագործման հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում», Երևան «Զանգակ-97», 2007թ., 192 էջ:
2. Վ. Լ. Հարությունյան և ուրիշներ, «Հարկեր և հարկազանձում», ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2010թ., 600 էջ:
3. Գ. Կիրակոսյան և ուրիշներ, «Տնտեսագիտության տեսություն», Երևան 2009թ., 752 էջ:
4. Վ. Բոստանջյանը և Գ. Կիրակոսյանը «Բյուջետային քաղաքականության հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները Հայաստանի Հանրապետությունում», Բանբեր 2021թ., 9 էջ:
5. Ա. Մաթևոսյան, Վ. Զանվելյան և Շ. Ալեքսանյան, «Հարկաբյուջետային քաղաքականությունը և ՀՀ կառուցվածքային բյուջեի գնահատականը», Եր. Տնտեսագետ 2014թ., 56 էջ:
6. ՀՀ Ազգային ժողով, ՀՀ Հարկային օրենսգիրք, 01.11.2016թ., 336 էջ, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=169107>:

7. John Maynard Keynes, The General Theory of Employment, Interest, and Money, 1936, https://www.files.ethz.ch/isn/125515/1366_KeynesTheoryofEmployment.pdf, p. 190.
8. CFA Institute, Monetary and Fiscal Policy, <https://www.cfainstitute.org/en/membership/professional-development/refresherreadings/monetary-fiscal-policy>
9. ՀՀ Վիճակագրական կոմիտե, Վիճակագրական ցուցանիշներ, <https://armstat.am/am/?nid=12&id=01001&submit=%D5%93%D5%B6%D5%BF%D6%80%D5%A5%D5%AC>
10. ՀՀ ԿԲ Բացառական բառարան, 11 էջ, https://www.cba.am/Storage/AM/downloads/parberakan/DVQ/%D4%B2%D5%A1%D5%BC%D5%A1%D6%80%D5%A1%D5%B6_18.pdf:
11. ՊԵԿ պաշտոնական կայքէջ, ՀՀ ՊԵԿ հաշվետվություններ, <https://www.petekamutner.am/siPublications.aspx?itn=ts&ptname=AnnualReports> :

References

1. V. L. Harowt'yownyan, «Harkayin qaghaqakanowt'yowny' & nra katarelagorc'man himnaharcery' Hayastani Hanrapetowt'yownowm», Er&an «Zangak-97», 2007t'., 192 e'j
2. V. L. Harowt'yownyan & owrishner, «Harker & harkagandzowm», HH GAA «Gitowt'yown» hrat., 2010t'., 600e'j
3. G. Kirakosyan & owrishner, «Tntesagitowt'yan tesowt'yown», Er&an 2009t'., 752 e'j
4. V. Bostanjany' & G. Kirakosyany' «Byowjetayin qaghaqakanowt'yan himnaxndirner' & dranc lowc'man owghinery' hayastani hanrapetowt'yownowm», Banber 2021t'., 9 e'j
5. A. Mat'osyan, V. Janvelyan & Sh. Aleqsanyan, «Harkabyowjetayin qaghaqakanowt'yowny' & HH kar'owcvac'qayin byowjei gnahatakany'», Er. Tntesaget 2014t'., 56 e'j
6. HH Azgayin jhoghov, HH Harkayin o'rensgirq, 01.11.2016t'., 336 e'j, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=169107>
7. John Maynard Keynes, The General Theory of Employment, Interest, and Money, 1936, https://www.files.ethz.ch/isn/125515/1366_KeynesTheoryofEmployment.pdf, p 190
8. CFA Institute, Monetary and Fiscal Policy, <https://www.cfainstitute.org/en/membership/professional-development/refresherreadings/monetary-fiscal-policy>
9. HH Vitwakagrakan komite, Vitwakagrakan cowcanishner, <https://armstat.am/am/?nid=12&id=01001&submit=%D5%93%D5%B6%D5%BF%D6%80%D5%A5%D5%AC>,
10. HH KB Bacatrankan bar'aran, 11 E'j, https://www.cba.am/Storage/AM/downloads/parberakan/DVQ/%D4%B2%D5%A1%D5%BC%D5%A1%D6%80%D5%A1%D5%B6_18.pdf
11. PEK pashtonakan kayqe'j, HH PEK hashvetvowt'yownner, <https://www.petekamutner.am/siPublications.aspx?itn=ts&ptname=AnnualReports>

ՖԻՍԿԱԼ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎՐԱ (ՀՀ ՕՐԻՆԱԿՈՎ)

Արշակ Հարությունի Վարժապետյան

Համառոտագիր: Հոդվածի նպատակն է դիտարկել ֆիսկալ կամ հարկաբյուջետային քաղաքականության մոտեցումներն աշխարհում, առհասարակ, և Հայաստանում: Չնայած այն հանգամանքին, որ հարկաբյուջետային քաղաքականության ուսումնասիրության աստիճանը Հայաստանում բավական խորքային է, սակայն մեր կարծիքով դեռևս առկա են բարեփոխման և կատարելագործման անհրաժեշտություններ՝ հատկապես Covid19 համավարակից հետո: Մեր **խնդիրն** էր ուսումնասիրել սույն հոդվածում հարկաբյուջետային քաղաքականությունը ՀՀ օրինակով՝ դրա ազդեցությունը ՀՆԱ-ի և գործազրկության վրա, հարկային բեռնվածության մակարդակը:

Հետազոտության համար տեսական, տեղեկատվական և **մեթոդաբանական** հիմք են հանդիսացել ՀՀ ՊԵԿ հաշվետվությունները, ՀՀ գործող օրենսդրական ակտերն ու նորմերը, ինտերնետային կայքերը, միջազգային կառույցների կողմից հրապարակված ֆիսկալ քաղաքականության սահմանումները, Քեյնսյան տեսությունը, հայրենական ու արտասահմանյան մասնագիտական գրականություններն ու հոդվածները, վիճակագրական-տեղեկատվական բազաները և այլն: Բացի հարկաբյուջետային համակարգի առկա վիճակի ուսումնասիրությունից, ուսումնասիրվել է նաև ՀՀ-ում հարկազանձման համակարգը. նկատվել են որոշ ոլորտներ, որտեղ հարկերի մի քանի տեսակներում առկա են ակնհայտ արտոնություններ և հարկային վարչարարության տեսանկյունից առկա չեն գիտական միջավայրի համար նախատեսված հարկային ուղենիշներ և այլն, որոնց մասով մեր կողմից նկատված բացերի ծածկման համար ներկայացրել ենք **կիրառական առաջարկություններ**:

Գիտական նորույթ: Բյուջեի մուտքերի ապահովման գործում հիմնավորվել է առավել որոշիչ մասնաբաժին ունեցող պետական պարտատոմսերի պլանավորումը, իրացումը և տեղաբաշխումը: Առաջարկվել է բորսային կարգավորման մեխանիզմ՝ հիմքում դնելով ֆինանսական միջոցների ներգրավումը պետական պարտատոմսերի ձեռք բերմամբ, տեղաբաշխմամբ, իսկ հարկ եղած դեպքում ԱԱՀ դրույքաչափի կիրառմամբ: Գիտական բարենպաստ միջավայրի ստեղծման նպատակով առաջարկվել է սահմանել եկամտային հարկի զեղչեր՝ հիմք ընդունելով գիտական աստիճանը:

Ուսումնասիրության արդյունքում եկել ենք այն եզրահանգման, որ Հայաստանում հարկաբյուջետային քաղաքականության տեսակներից, ներկայումս գործում է միայն զսպող կամ ռեստրիկտիվ տեսակը: Տասներեք տարվա միջին թվաբանական հաշվարկի արդյունքում փաստվեց, որ հարկային բեռը չի նվազում, իսկ դրան զուգահեռ՝ նույն ժամանակահատվածում միևնույն մեթոդաբանության դիտարկմամբ երևում է, որ ավելանում է պետական պարտքը, իսկ գործազրկության մակարդակում առկա չէ նույնիսկ դրական դինամիկա: Ուսում-

նասիրվել է նաև հարկերի և բյուջեի եկամուտների միջև առկա կապի էկոնոմետրիկ վերլուծությունը, ըստ որի բյուջեի կախվածությունը հարկերից ուժեղ է, ինչը ենթադրում է, որ տնտեսական մեծ շոկերի դեպքում, ինչպիսին էր Covid19-ի Lock Down-ը, բյուջեի եկամտային ապահովման վրա կլինի բացասական մեծ ազդեցություն, որը կհանգեցնի տնտեսական շոկի:

Բանալի բառեր. ՀՆԱ, հարկաբյուջետային քաղաքականություն, հարկ, պետական պարտք, գործազրկություն, բյուջե, հարկային բեռ, շահութահարկ, ԱԱՀ, եկամտային հարկ:

ВЛИЯНИЕ ФИСКАЛЬНОЙ ПОЛИТИКИ НА ЭКОНОМИКУ (НА ПРИМЕРЕ РА)

Аршак Арутюнович Варжапетян

Аннотация: Целью данной статьи является рассмотрение подходов к фискальной политике во всем мире и в Армении. Несмотря на то, что учебный уровень исследования налогово-бюджетной политики в Армении достаточно глубока, на наш взгляд, потребности в реформах и улучшениях все же есть, особенно после пандемии Covid19. Нашей **задачей** в данной статье было изучение фискальной политики на примере РА, ее влияние на ВВП и безработицу, уровень налоговой нагрузки.

Теоретической, информативной и **методологической** основой исследования послужили отчеты КГД РА, действующие законодательные акты и нормы РА, интернет-сайты, определение фискальной политики - опубликованные международными структурами, кейнсианская теория, отечественная и зарубежная профессиональная литература и статьи, информационно-статистические базы данных и другие. Помимо изучения современного состояния бюджетной системы, была изучена система сбора налогов в РА, были отмечены некоторые области, где существуют явные льготы по некоторым видам налогов, и с точки зрения налогового администрирования, никаких налоговых указаний по научному вмешательству и т.д. в отношении которых мы представили **практические рекомендации** по устранению замечаемых нами пробелов.

Научная новизна: Обосновано планирование, реализация и размещение государственных облигаций с наиболее решающей долей в обеспечении доходов бюджета. Предложен механизм биржевого регулирования, основанный на привлечении финансовых средств за счет приобретения и размещения государственных облигаций, а при необходимости применения ставки НДС. В целях создания благоприятной научной среды было предложено учитывая ученую степень, установить льготы по налогу на прибыль.

В результате исследования мы пришли к выводу, что типы фискальной политики в Армении в настоящее время относятся к сдерживающему или ограни-

чительному типу, поскольку в результате 13-летнего среднеарифметического расчета было доказано, что налоговая нагрузка не уменьшается, и параллельно с ним, в тот же период, соблюдая ту же методику, видно, что увеличивается государственный долг, а положительная динамика уровня безработицы практически отсутствует. Также был изучен эконометрический анализ взаимосвязи между налогами и доходами бюджета, согласно которому зависимость бюджета от налогов сильная, что подразумевает, что в случае крупных экономических потрясений, таких как Блокировка Covid19, будет большое негативное влияние на доходную обеспеченность бюджета, что приведет к экономическому шоку.

Ключевые слова: ВВП, фискальная политика, налог, государственный долг, безработица, бюджет, налоговая нагрузка, налог на прибыль, НДС, подоходный налог.

THE IMPACT OF FISCAL POLICY ON THE ECONOMY (WITH THE EXAMPLE OF RA)

Arshak Harutyun Varzhapetyan

Abstract: The **purpose** of this article is to consider the approaches to fiscal policy in the world in general, as well as in Armenia. Despite the fact that the **degree of fiscal policy research** in Armenia is quite deep, in our opinion there are still needs for reform and improvement, especially after the Covid 19 pandemic. **Our problem** in this article was to study the fiscal policy on the example of the RA, its impact on GDP and unemployment, the level of tax burden.

The theoretical, informational and **methodological** basis for the research were the reports of the RA SRC, the current legislative acts and norms of the RA, internet sites, definitions of fiscal policy published by international structures, Keynesian theory, domestic and foreign professional literature and articles, statistical-informational databases, etc. In addition to the study of the current state of the co-budgetary system, the system of taxation in the RA was studied, some areas observed, where there are obvious benefits in some types of taxes, and from the point of view of the tax administration, there are no tax guidelines for the scientific environment, etc., regarding which we have presented **concrete recommendations** to cover the gaps we have noticed.

Scientific novelty: The planning, implementation and distribution of state bonds with the most decisive share in securing the budget revenues was substantiated. A stock exchange regulation mechanism has been proposed, based on the attraction of financial funds through the purchase and allocation of government bonds, and if necessary, the application of the VAT rate. In order to create a favorable scientific environment, it was proposed to establish income tax benefits based on the academic degree.

As a result of the research, we came to the **conclusion** that the types of fiscal policy in Armenia are currently the restraining or restrictive type, because the result of the 13-year average calculation proved that the tax burden does not decrease. So, at the same time, in the same period, with the same methodology, it can be seen that the state debt is increasing and there is almost no positive dynamics in the level of unemployment. An econometric analysis of the relationship between taxes and budget revenues has also been researched, according to which the budget's dependence on taxes is strong, which implies that in the event of major economic shocks, such as the Lock Down of Covid19, there will be a large negative impact on the budget's revenue provision which will lead to an economic shock.

Keywords: GDP, fiscal policy, tax, public debt, unemployment, budget, tax burden, profit tax, VAT, income tax.